Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

6872

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ

ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

108

ԱՂԽԱՏԱՍԻՐԵՑ

Թիֆլիսի Թանդոյեան Ս. Աստուածածին եկեղեցու մնաբան

ՆԵՐՍԷՍ ՔԱՀԱՆԱՅ ՂԱՄԱՋԵԱՆՑ

«Ուրեմն, եղբարք, հաստատ կացէք, և պինդ բռնեցէք, այն աւանդութիւնները, որ սովրեցէք՝ թէ խօսքով և թէ մեր գրով։» Թեսաղ. Բ. 14.

ԹԻՓԼԻՍ

Արագ. տպար. Մ. Մարտիրոսեանցի

1901

28(075)
Ղ-22

280
59-2Ա
28(075)
Ղ-77
2029
-1-

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ

ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ

Թիֆլիսի Թանդոյեան Ս. Աստուածածին եկեղեցու միաբան

ՆԵՐՍԷՍ ՔԱՀԱՆԱՅ ՂԱՄԱՋԵԱՆՑ

«Ուրեմն, եղբարք, հաստատ կացէք, և պինդ բռնեցէք, այն աւանդութիւնները, որ սովրեցէք՝ թէ խօսքով և թէ գրով» Թեսաղ. Բ. 14.

15824.58

ԹԻՓԼԻՍ

Արաց. տպար. Մ. Մարտիրոսեանցի

1901

32024-Ա.Հ

19.06.2013

6872

Дозв. ценз. Тифлисъ, 16-го Апрѣля 1901 г.

Ըստ բարձու հրամանի Նորին Ս. Օծութեան Վեհափառ Հայրապետի ազգիս Տ. Տ. Մկրտչի Դիւանս թոյլատրէ տպագրութեան դասագրոյս հաստատելով ստորագրութեամբ եւ դրոշմամբ կնքոյ Հայրապետական Դիւանի։

Ի 6 մարտի 1901 ամի ի Տփխիս

Դիւանապետ՝ ԿՈՐԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ՆՈՐԻՆ

ԱՄԵՆԱՊԱՏՈՒՐԱԿԱՆ

Տ. ՄԵԼՔԻՍԵԴԵԿ ԵՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱՏԵՍԵՆՑԻՆ

ԽՈՐԻՆ ՑԱՐԳԱՆՔԻ ՆՈՒԷՐ

ԱՅԽԱՏԱՒԻՐՈՂԻՑ

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

Քրիստոնէական կրօնի ուսումը մանկութիւնից պիտի սկսուի, որովհետև մարդս ամեն հասակում բարոյական պարտաւորութիւններ ունի կատարելու, ուստի նա օրէցօր պիտի զարգանայ և զօրանայ արքութեան մէջ, որպէս զի մօտենայ Աստծուն։ Կրօնը ծանօթացնում է մարդուն Աստծու հետ, որով պարտաւորում է պաշտել և սիրել Նրան իր երջանկութեան համար։ Նա է սովորեցնում՝ թէ մեղքը մարդուն որչափ հեռացրել է Աստծուց և թէ ինչ հնարքով մարդս կարող է մօտենալ Աստծուն և հաշտուել Նրա հետ։ Սակայն, մենք միայն սովորելով չենք կարող Աստծու հետ միանալ, այլ, երբ կըհնազանդենք Նրան, կըսիրենք և Նրա սուրբ կամքը կըկատարենք։ Ուրեմն անշուշտ պիտի գործ դնենք միջոցներ, այն է՝ Աստծուն սիրել մեր հոգու բոլոր զօրութիւնով, սրտով հաւատալ Նրա պատուիրանները։ Կրօնը մար-

դու ամենահարկաւոր գիտութիւնն է, որի առարկան Աստուած է. մարդս, առանց լաւ ուսումնասիրելու այդ գիտութիւնը չի կարող երջանիկ լինել, որովհետև մարդս նրա մէջ միայն կարող է գտնել հոգու անդորրութիւն, մտքի լուսաւորութիւն, սրտի խաղաղութիւն և նեղութիւնների մէջ մխիթարութիւն. Աստուած Իւր գոյութիւնը տպաւորել է մարդու մտքի, խղճի և յայտնութեան մէջ։

ՄԻՏՔԸ հաստատում է, որ կայ մի սկզբնապատճառ բոլոր արարածների, որ մարդս ինքն իրեն չէր կարող ստեղծուել և ոչ էլ միւս արարածները, ուրեմն կայ մի աներևոյթ զօրութիւն, որ պիտի լինի անսկիզբն—անվախճան Էակ։ Մարդս մտածելով տեսնում է աշխարհի ստեղծագործութեան կարգը, որը ամենակարողութեան նշան է և նրանով հաստատում է, որ կայ մի զօրութիւն, որ է Աստուած։

ԽԻՂՃԸ հոգու այն զօրութիւնն է, որ մեզ հասկացնում է մեր կատարելու պարտքերը, նրանով զանազանում ենք բարին ու չարը. սա լուսաւորում է միայն բարոյական դաստիարակութիւնով։ Սա երկիւղի ծնունդ չէ և ոչ հաւանութեան. եթէ դրանց ծնունդը լինէր, այն ժամանակ խիղճը միշտ կը համաձայնէր մարդկանց ամեն տեսակ դատողութիւնների, բայց

մենք տեսնում ենք, որ նա ընդդիմանում է այն բոլոր թերի դատողութիւններին, որոնք համաձայն չեն իւր օրէնքին։ Նա ցոյց կըտայ իւր ներգործութիւնը սրտի և մտքի ծածուկ այն շարժողութիւններին, որոնց մարդիկ չեն կարող տեսնել. Նա ներսից մարդուն իմաց է տալիս, որ նրա կեանքը կախումն ունի մի մեծ զօրութիւնից և սրանով հաստատւում է, որ խիղճն արտաքին իրողութեան ծնունդ չէ, այլ Աստծու ձայն է։ Սա տրուած է մարդուն Աստծուց, ինչպէս մի ներքին վկայ իւր գոյութիւնը հաստատելու համար, այդ պատճառով է որ Աստուած խիղճը տպաւորել է մարդու սրտի մէջ։

Թէպէտ Աստծու գոյութիւնը իմացւում է մտքի ու խղճի միջոցով, բայց ամենապարզ և հաստատ վկայութիւնը իւր գոյութեան համար Աստուած յայտնել է իւր խօսքով, որ է Աստուածաշունչը։ Սուրբ գիրքը տալիս է մեզ բարոյական դիտութիւն, որը ծանօթացնում է Աստծու կատարելութիւնների, Նրա գործերի և խորհուրդների հետ։ Յայտնութեան միջոցով սիրտն ու միտքն էլ գտնում են բաւականութիւն և այդ նրա համար միայն, որովհետև Աստուածաշունչը գրուած է Աստծու հոգով ու շնչով, նրանով լուսաբանում ու հաստատւում

են այն ճշմարտութիւնները, ինչ որ մեզ թելադրում է մեր միտքն ու խղճմտանքը։

Սուրբ գրքի ուսումով այնպիսի բաներ են հաստատուում, որոնց մեր միտքը չէր կարող հասնել. նա մեզ սովորեցնում է թէ ինչ է հարկաւոր, որ կարողանանք մօտենալ Աստծուն։ Աստուածաշնչի մէջ այնպիսի խորհուրդներ կան, որոնց մարդուս միտքը չի հասնիլ և հէնց այդ խորհուրդներով մարդս որոշուում է Աստուծուց։ Ս. Գիրքը.—Մինչև Աստուածաշնչի գրուիլը աստուածպաշտութիւնը և պատմութիւնը աւանդութիւնով էր պահպանուում։ Աստուած խօսել է նախածնողների հետ և նրա խօսքը աւանդաբար հասաւ յետագայ սերունդներին մինչև Մովսէս մարգարէն, որը գրեց Աստծու խօսքերը և աւանդութիւնները, իսկ նրանից յետոյ շարունակեցին գրել յաջորդ մարգարէները։

Աստուածաշունչը բաժանուում է երկու մասի —Հին և Նոր Կտակարան։ Հին Կտակարանը պատմում է Աստծու գործերը, կրօնի զանազան գրութիւնը՝ աշխարհի սկզբից մինչև Փրկչի գալուստը։ Իսկ Նոր Կտակարանը պատմում և հաստատում է այն ամենը, ինչ որ Աստուած Հին Կտակարանի մէջ խօսել է Իւր գործերի և կամքի մասին և որը լրումն ստացաւ Մեսիայի գալով։ Նոր Կտակարանը կոչուեցաւ Աւետարան, որ

նշանակում է բարի համբաւ։ Հին և Նոր Կտակարանները ստեղծեցին մի հաւատ։ Նորը ծածկուած էր հնի մէջ, իսկ հինը նորի մէջ բացուեցաւ։ Նոր Կտակարանը ամբողջապէս տուեց այն ամենը, ինչ որ հինը թողել էր մեզ ցանկանալու։ Հինը մի ազգի համար էր, իսկ նորը ամբողջ մարդկութեան։ Հին Կտակարանը պարունակում է իւր մէջ 45 գիրք և բաժանուում է չորս մասի.—ա. Օրէնք, բ. Պատմութիւն, գ. Բարոյականութիւն և դ. Մարգարէութիւն։ Առաջնի մէջ պարունակուում են հին օրէնքներ, Աստծու խոստումներ և ուխտը, որը են Ծննդոց, Ելից, Ղեւտացոց, Թուոց և այլն։ Երկրորդը պատմում է բարեպաշտ և չար մարդկանց մասին, որոնք են—Յեսուայ որդւոյ Նաւեայ, Դատաւորաց, Թագաւորաց և այլն։ Երրորդը խօսում է բարոյական ուսման և կանոնների մասին, որոնք են— Յովբայ արդարոյ գրուածքը, Դաւիթ մարգարէի սաղմոսը, Սողոմոնի առակաց գիրքը և այլն։ Չորրորդն է Մարգարէութիւն, այն է ապագայ գուշակութիւններ, որոնք են Եսայի, Երեմիայի և Դանիէլի մարգարէութիւններն և այլն։ Մովսիսական հին ուխտի մէջ գլխաւորը համարուում են տասն պատգամները։ Սրանք Աստծու ուխտն են և այս պատգամները սրբութիւնով կատարողներին խոս-

տանում է ազատել սկզբնական մեղքից և փրկութեան հասնել և բաժանւում են երկու մասի. չորս պատգամը խօսում է աստուածպաշտութեան վրայ, իսկ վեցը ընկերսիրութեան վրայ։

ՏԱՍՆ ՊԱՏԳԱՄՆԵՐ

1. «Ես եմ Տէր Աստուած քո և մի եղիցին քեզ այլ աստուածք բաց յինէն».—Ես եմ քո Տէր Աստուածը, ինձնից զատ ուրիշ աստուած չունենաս։ Սրանով Աստուած մեզ հրամայում է սրբտով հաւատալ և գործով պաշտել մի Աստուած և միայն նրան սիրել, որը և Քրիստոս հաստատեց.—Սիրիր զՏէր Աստծուն քո բոլոր սրտով, մտքով և անձով.—Մատթ. ԻԲ. 37։ Այս պատուիրանը միանգամայն արգելում է անաստուածութիւնը, սնոտիապաշտութիւնը և անհաւատութիւնը, պահանջում է խոնարհութիւն, առաքինութիւն, սրբութիւն, արիութիւն և համբերութիւն։

2. Մի արասցես դու քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան, որ ինչ յերկինս ի վերս և որ ինչ յերկիր ի խոնարհ, մի պաշտեսցես զնոսա»։—Քեզ համար կուռք մի չինիր ոչ վերևի բաների նմանութեամբ և ոչ ներքևի՝ երկրիս վրայ գտնուածների նմանութեամբ, մի պաշտիր նրանց։ Սրա-

նով արգելում է աստուածավայել պատիւ տալը արարածներին, լինի չնչաւոր թէ անշունչ։ Թէպէտ մեր եկեղեցին ընդունում է տէրունական և սրբերի օծեալ պատկերներ, բայց դրա ոչ թէ իսկական էութիւններ են, այլ որպէս յիշողութիւն, որոնց հոգիները բարեխօս են Աստծու առաջ։ Այս պատգամն արգելում է ագահութիւն, արծաթասիրութիւն և հպարտութիւն և պահանջում է լինել ճշմարիտ, ողորմած, արդար և պատուիրանապահ։

3. «Մի առնուցուս զանուն Աստուծոյ քո ի վերայ սնոտեաց»։—Զուր տեղն Աստծու անունը մի յիշիր։ Սրանով պատուիրում է մեզ, որ Աստծու անունը յիշենք միայն աղօթքի ժամանակ և երդուինք միայն այն դէպքում, երբ օրէնքից ստիպուած լինինք, այն էլ մեծ զգուշութիւնով և արդարութիւնով։ Արգելում է դատարկ բաների համար թեթևամտութիւնով Նրա ս. անունը յիշել և սուտ երդուիլ։ Իսկ ս. Աւետարանն իսպառ արգելում է երդուիլ. «Թող ձերխօսքը լինի այո՝ այո և ոչն՝ ոչ, որովհետև սրանից աւելին չարիցն է»։ Մատթ. Ե. 34։

4. «Յիշեա՛ սրբել զօրն շաբաթու և նուիրեա՛ Տեառն քում».—Միտքդ պահիր, որ շաբաթ օրը պէտք է սուրբ պահել. վեց օրում բոլոր գործերդ վերջացրու, իսկ եօթներորդ օրը քո Տէր

Աստծուն նուիրիր։ Սրանով պատուիրում է մեզ գաղարեցնել մարմնաւոր աշխատութիւնը, վեց օրուայ գործերը քննել, եկեղեցի գնալ կամ տունը աղօթել, կարդալ ս. գիրքը և բարոյական պատմութիւններ, զբաղուել բարի գործերով և օգնել կարօտեալներին։ Շաբաթ հրէից բառ է և նշանակում է հանգիստ։ Առաքեալներն ի պատիւ Քրիստոսի փոխանակ շաբաթը պահելու, միաշաբաթը տօնեցին, նախ որ Փրկչի յարութեան օրն է, և երկրորդ՝ որպէս արարչագործութեան առաջին օր։ Կիրակուն հաւասար սուրբ պէտք է պահել նաև տօն օրերը։ Տօնները լինում են—Տէրունական, Աստուածածնի և սրբերի։ Տէրունական տօներն են—Աւետումն, Աստուածայայտնութիւն, Թլփատութիւն, Տեառնընդառաջ, Զատիկ, Համբարձում և այլն։ Աստուածածնի տօներն են—Ծղութիւն, Ծնունդ, Երից ամաց ընծայումն, Վերափոխումն. Սրբերի տօներն են—ս. Թադէոս և ս. Բարդուղիմէոս առաքեալներինը, և Գրիգոր Լուսաւորչի երեք տօները, ս. Թարգմանիչներինը, Վարդանանցը և այլն։

5. «Պատուեա զհայր քո և զմայր, զի բարի լինիցի քեզ և երկայնակեաց լիցիս ի վերայ երկրի»։—Պատուիր քո հօրն ու մօրը, որ քեզ բարի լինի և երկար կեանք ունենաս երկրի վրայ։ Այս

պատուիրանը քարեղէն տախտակի վրայ առաջին տեղն է բռնում և մեզ սովորեցնում է, որ Աստծուց յետոյ բոլոր սրտով պիտի սիրենք և պատուենք մեր ծնողներին։ Նոյնպէս պիտի պատուենք մեր մեծաւորներին, բարերարներին, հոգևորականներին, ուսուցիչներին և այն բոլոր անձանց, որոնք մարդկութեան համար բարիք են գործում։ Ս. Գիրքը պատուիրում է—«Աղաչում եմ ձեզ, եղբայրներ, ճանաչել ձեր աշխատաւորներին և կառավարիչներին ի տէր Աստծու»։ Ա. Թես. Ե. 12։

6. «Մի սպանաներ».—Սպանութիւն մի անիր։ Այս պատուիրանով արգելում է չսպանել ոչ սրի, ոչ ձեռքով, ոչ զէնքով, ոչ գործով, ոչ լեզուով. արգելում է նաև ինքնասպանութիւնը, որովհետև մեր կեանքը պատկանում է Աստծուն։ «Մարմինը ձեր սուրբ հոգու տաճարն է, այդ մարմինը ստացել էր Աստծուց և դուք՝ չէք ձեր անձանց տէրը»։ Ա. Կորնթ. Զ. 9։

7. «Մի շնար».—Շնութիւն մի անիր։ Սրանով պատուիրում է մաքուր լինել սրտով, գործով և խօսքով։ Ամուսնութիւնից դուրս ամեն տեսակ պոռնկութիւնը շնութիւն է համարւում։ Քրիստոս հրամայում է. «Ամեն մարդ, ով օք կնոջ մտիկ կըտայ նրան ցանկանալու համար, նա

արդէն չնայաւ նրա հետ իւր սրտի մէջ»։ Մատթ. Ե. 28։

8. «Մի գողանար»—Գողութիւն մի անիր։ Այս ասելով արգելում է ուրիշի սեփականութիւնը յափշտակել, կշռքի և չափի մէջ խաբել, կաշառք վերցնել, աղքատներին զրկել, մշակների վարձը կտրել։ Սուրբ Գիրքն ասում է «Լաւ է տալ, մանաւանդ քան զառնուլն»։ Ուրեմն ոչ թէ շահուիլ հարկաւոր է կամ ուրիշի ունեցածն իւրացնել, այլ իւր աշխատութեամբ օգնել ուրիշին։

9. «Մի սուտ վկայեր զընկերդ քումմէ».—Ընկերիդ համար սուտ չվկայես։ Իններորդ պատուիրանն արգելում է ամեն տեսակ ստախօսութիւն, չվնասել ոչ ոքի ոչ մտքով, ոչ զրպարտելով և ոչ մատնելով, այլ աշխատել միշտ հեռու մնալ վատաբանութիւնից և չար գործերից։ Սուրբ Գիրքն էլ պատուիրում է. «Ով կամենում է իւր կեանքը սիրել և իւր օրերը բարութեան մէջ տեսնել, թող լուռ պահէ իւր լեզուն, չար չխօսի և շրթունքները խաբէութիւն չխօսին»։ Ա. Պետ. Գ. 10.

10. «Մի ցանկանար տան ընկերի քո և մի ամենայնի, որ ինչ նորա իցէ»։—Ընկերոջ տան և նրա ունեցած ոչ մի բանին աչք չպէտք է դնել չար ու նախանձ աչքով չնայել ուրիշի բաղդաւորութեան վրայ, այլ գոհ լինել իւր ունեցածով և մեր քրտնքով ձեռք բերածով բաւականանալ, ինչպէս պատուիրում է առաքեալը. «Ոչ թէ կարօտութեան պատճառով եմ ասում, այլ նրա համար, որ ես սովորեցի բաւականանալ նրանով, ինչ որ ունիմ»։ Փիլիպ. Գ. 11։

ԱՂՕԹՔ

Աղօթքն այն նշանակութիւնն ունի, որ մարդս նրանով միանում է Աստծու հետ և խնդրում է Նրանից հարկաւորը մեր հոգևոր և մարմնաւոր պէտքերի համար։ Այս միակ ճանապարհն է աստուածային շնորհներ ստանալու. մենք միշտ ունինք թէ հոգևոր և թէ մարմնաւոր անթիւ կարօտութիւններ, որոնց մեզումեզ բաւականութիւն տալ չենք կարող։ Աստուած միայն կարող է մեզ զօրութիւն տալ դիմադրելու բոլոր փորձութիւններին։ Ուրեմն աղօթելը մեծ պարտք և իրաւունք է մեզ համար. այս պատճառով աղօթքը լաւ պիտի հասկանալ, անդադար աղօթել և բարի բաներ խնդրել։ Աղօթքը լինում է երկու տեսակ.—Հասարակ և Յատուկ։

Հասարակ է ասւում, երբ հրապարակով հոգեորականների հետ աղօթում ենք տաճարում և միասին Աստծուն պաշտօն ենք մատու-

ցանում։ «Եւ այժմ, աղօթում եմ, որ ամենից առաջ աղօթք, խնդրուածք, աղաչանք, գոհութիւն մատուցանել մարդկանց համար»։ Տիմ. Ա. ԺԳ. 1։

Ցատուկն է, երբ աղօթողը լուռ կամ ձայնով առանձին աղօթում է, լինի կանգնած թէ ծնկաչօք, ման դալիս թէ պառկած։ Ինչպէս պատուիրում է Քրիստոս. «Մտիր քո սենեակը (սիրտը) և փակիր դռները (բերանը) և ծածուկ աղօթք արա քո հօրդ»։ Մատթ. ԺԳ. 6։ Հին ժամանակները վարդապետները սովորութիւն ունէին իրենց աշակերտներին սովորեցնելու մի քանի հոմառօտ աղօթքներ, ինչպէս Յովհաննէս Մկրտիչը սովորեցրել էր իւր աշակերտներին. նոյնպէս և Քրիստոսը ուսոյց իւր աշակերտներին «Հայր մեր» աղօթքը, որ ասում ենք «Տէրունական աղօթք»։

Տէրունական աղօթքը երեք մասի է բաժանուում,—Յառաջաբան, խնդրուածք և վերջաբան։ Յառաջաբանն է «Հայր մեր որ յերկինս ես»։ Յիսուս մեզ իրաւունք տուեց Աստծուն Հայր անուանել մեր աղօթքի սկզբին, որպէս զի հայր անուանելով՝ մեր սրտի մէջ որդիական պատիւ ծնուի։ Այնպէս որ մենք իբրև խոնարհ որդիք սիրենք այն ամենը, ինչ որ փառք է մեր երկնաւոր հօր համար, հնազանդուինք Նրա կամքին և վստահ ապաւինինք միայն Նրա օգնութեան։ Հայր բառի վրայ աւելացնելով մեր խօսքը, որանով Յիսուս մեզ պատուիրում է ոչ միայն մեզ համար, այլ և ամենքի համար աղօթել, որանով կամենում է մեր մէջ ծնեցնել մարդասիրութեան և եղբայրսիրութեան զգացմունքը, որով ցոյց է տալիս, որ մի հօր որդիք և միմեանց եղբայր ենք։ Քրիստոսը Հայր մեր ասելուց յետոյ աւելացնում է «որ յերկինս ես» ոչ թէ այն պատճառով որ Աստուած միայն երկնքումն է, ոչ Աստուած ամեն տեղ է, այլ այն պատճառով, որ այս աշխարհից մեր միտքը բարձրացնի դէպի Երկնաւոր Հայրը, որովհետև երկնքումն ենք տեսնում Աստծու մեծութեան և փառքի երևելի նշանները, արեգակի, լուսնի և աստղերի փայլը և Աստծու հրեշտակներին։ Այս մեծութիւնն է, որ տանում է մեր սէրն ու միտքը աշխարհի կապակցութիւնից և վառում է մեր հոգին այն փառաւոր երկնային երջանկութեան եռանդով, որն որ մեր երկնաւոր հայրը պատրաստել է արդարների համար և դրա համար է, որ ասում ենք «Հայր մեր որ յերկինս ես»։ Խնդրուածքը իւր մէջ վեց մասն է պարունակում։

ԱՌԱՋԻՆ.—«Սուրբ եղիցի անուն քո». Խնդրել Աստծուց, որ Նրա անունը սուրբ լինի, նշանակում է Աստծուց խնդրել շնորհք, որ կա-

բողանանք Նրան ճանաչել, ունենալ ուղիղ դատողութիւն Նրա կատարելութիւնների վրայ, փառաւորել Նրա անունը, ծառայել Նրան մեր բոլոր զօրութեամբ։ Այնպէս որ Նրա անունն անպատիւ չլինի մեր պատճառով, այլ գովուի ու փառաւորուի մեր բարի գործերով, ինչպէս պատուիրում է Աւետարանը. «Ձեր լոյսն այնպէս պէտք է լուսաւորէ մարդկանց առաջ, որ Ձեր բարի գործերը տեսնեն և փառաւորեն ձեր Հօրը, որ երկնքումն է»։ Մատթ. Ե. 16։

ԵՐԿՐՈՐԴ ԽՆԴՐՈՒԱԾՔ.—«Եկեսցէ արքայութիւն քո». Դայ քո թագաւորութիւնը ասելով խնդրում ենք Աստծուց, որ հեռացնէ մեզնից ամեն տեսակ արգելքներ, աւելի մօտեցնէ մեզ Աւետարանի ճշմարտութեանը և տայ մեզ շնորհք հնազանդելու Նրան, որ թագաւորէ մեր սրտի մէջ սիրով, որ մենք կարողանանք վայելել Նրա փառաւոր արքայութիւնը։ Աստծու արքայութիւնը Նրա շնորհքի զօրութիւնն է, որ ծնւում է մեր մէջ, զօրանում է և ցոյց է տալիս իւր պտուղը բարութիւնով։ Ինչպէս Յիսուսն ասաց փարիսեցուն. «Աստծու արքայութիւնը դրսի նշաններով չի գալ, ինչու որ՝ նա հէնց ձեր ներսումն է»։ Ղուկ. ԺԷ. 20։

ԵՐՐՈՐԴ ԽՆԴՐՈՒԱԾՔ.—«Եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի».—Լինի քո կամքը

երկրիս վրայ այնպէս, ինչպէս երկնքումն է։ Սրանով խնդրում ենք Աստծուց, որ տայ մեզ շնորհք բոլորովին հնազանդելու Նրան թէ յաջողութեան և թէ անյաջողութեան մէջ և ընծայել մեր կեանքը ամեն տեսակ դէպքերում։ Ամենայն խոնարհութեամբ և ջերմեռանդութիւնով պիտի հնազանդինք Աստծուն, ինչպէս հրեշտակները երկնքումը հնազանդ են և սպասաւորում են Նրան «Յերկինս» ասելով՝ հրեշտակների հնազանդութիւնը օրինակ է տալիս մեզ, որ մենք աշխատենք նմանել նրանց կատարեալ խոնարհութիւնով, որով կը հաստատուի երկրիս մէջ կարգ, կանոն, հաւատարմութիւն և սրբութիւն և միշտ պիտի հեռու մնանք ունայն վայելչութիւնից և հետևել ճշմարտութեան։ Քրիստոս այս արգելքը մեզնից հեռացընելու համար պատուիրում է մեզ խնդրել մեր ամենօրեայ հացը։

ՉՈՐՈՐԴ.—«Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր».—Մեր ամենօրեայ հացը այսօր էլ տուր։ Այս խնդրուածքի մէջ բովանդակում է այն ամենը, ինչ որ հարկաւոր է մարդուս այս կեանքում։ Սրանով Քրիստոս մեզ յիշեցնում է նաև, որ ամեն բարութեան պատճառը Աստուած է։ Նա կը տայ մեզ այն ամեն բարութիւնը։ ինչ որ ինքներս չենք կարող ստանալ

առանց Նրա սուրբ կամքին այս աշխարհում
ոչ մեր հոգալով և ոչ էլ մեր ջանքով։ «Ե
տնկեցի Պաղոս ջուր տուեց. բայց Աստուա
աճեցրեց»։ Ուրեմն ոչ նա մի բան է ով տնկե
և ոչ նա ով ջուր տուեց, այլ Աստուած որ ա
ճեցրեց։ Ա. Կորնթ. Գ. 6։ Քրիստոսը «դհա
մեր» ասելով կամենում է մեզ հասկացնել, ո
այս հացը պէտք է լինի մերը. այսինքն մե
օրինաւոր աշխատանքով, մեր արդար վաստա
կով ձեռք բերածը, առանց ուրիշներին վնա
սելու ու զրկանք հասցնելու։ Հանապազորդ ա
սելով հասկացնում է, ինչպէս որ օրական մշա
կը իւր վարձը ստանում է իւր տիրոջից, նոյն
պէս էլ մենք կըստանանք ամենօրեայ հացը
քանի որ Աստծուն ենք ծառայում, ինչպէս
իսրայէլացիները ամեն օր անապատում ստա
նում էին մանանայ, որքան որ հարկաւոր էր
իրենց։ Սրանով պիտի հասկանանք, որ մենք
ամեն օր կախումն ունինք Աստծուց, ամենայն
օր պիտի դիմենք աղօթքով շնորհակալութիւն
անելու Նրա տուած ողորմութեան համար։
Մեզ յիշեցնում է մեր կեանքի անհաստատու-
թիւնը, որ մարդ չի կարող ասել թէ վաղուան
օրը կապրի անպատճառ, սրանով հասկացնում
է որ աւելորդ շատ հոգսեր չանենք։ Ինչպէս
ասում է. «Այսուհետև վաղուան համար հոգս մի

անէք, որովհետև վաղուան օրը իւր համար հոգս կա-
նէ, օրուայ համար իւր նեղութիւնը բաւական է։
Մատթ. Զ. 34։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԽՆԴՐՈՒԱԾՔ.—«Եւ թող մեզ
զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պար-
տապանաց».—Մեր մեղքերը մեզ թող, ինչպէս
որ մենք ներում ենք մեր պարտականներին։
Մենք ինչ լաւութիւն որ անենք, բոլորը Աս-
տծու տուած են, թէ նիւթական և թէ բա-
րոյական և այդ բոլորը պիտի գործ դնենք Նրա
օրինաց համաձայն. իսկ եթէ մենք այդպէս չենք
վարուում, այն ժամանակ մենք պարտական ենք
մնում Աստծու առաջ։ Այսպէս, երբ ասում ենք
«Թող մեզ զպարտիս մեր», պիտի հասկանանք,
որ մեզ թողութիւն կըլինի այն դէպքում, երբ
մենք ևս կըթողնենք մեր դէմ գործող պար-
տապաններին։ Սրան հետևում է, որ եթէ մենք
միմեանց չենք ներում, այն ժամանակ օրէնքի
հակառակ ենք գործում և լինում ենք եղբայ-
րատեաց։ Որովհետև «Թող մեզ» ասելով մենք
ոչ թէ միայն մեր անձի համար ենք խնդրում,
այլ ամեն մարդու համար, որոց մէջ են նաև
մեր պարտապանները և պարտաւոր ենք միշտ
ներել, ինչպէս պատուիրում է Աւետարանը
Մատթ. ԺԸ. 21։ Այն ժամանակ մօտեցաւ Նրան
Պետրոսը և ասաց. «Տէր, թէ որ իմ եղբայրը իմ

դէմ մեղանչէ, քանի անգամ պիտի թողութիւն տամ նրան, մինչև եոթն անգամ»։ Յիսուս պատասխանեց, «Ոչ թէ եոթն անգամ, այլ մինչև եոթանասուն անգամ եոթն (490) անգամ»։ Ուրեմն մենք միշտ ներողամիտ պիտի լինինք։

ՎԵՑԵՐՈՐԴ.—«Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա ի չարէ»։—Մի ձգիր մեզ փորձանքի մէջ, այլ ազատիր չարից։ Փորձութիւնը լինում է երկու տեսակ. առաջինը՝ եթէ Աստուած փորձում է մեզ մարդկանց առաջ, դրանով մեզ տալիս է հաստատ հաւատ, անկեղծ սէր և համբերութեան յոյս՝ դէպի ինքն. օրինակ, ինչպէս Յովսէփ զեղեցիկը, որ օրինակ է ողջախոհութեան։ Նոյնպէս փորձեց ծանր տանջանքներ տալով Յովբին, որ կոչուեցաւ «հայր համբերութեան»։ Այս փորձութիւնը պատահում է թէ բաղդաւորութեան և թէ անբաղդութեան ժամանակ։ Իսկ երկրորդ տեսակ փորձութիւնները և անյաջողութիւններն իրենից են, որը տանում է մարդուն դէպի մեղք։ Եւ որովհետև Աստուած մարդուն ստեղծել է անձնիշխան, երբ մարդս այդ ազատութիւնն ի չարը գործ կդնէ, ուրեմն իւր յօժար կամքով ընկնում է փորձութեան մէջ։ «Մի տանիր» ասելով Աստծուց խնդրում ենք, որ չընկնենք փորձութեան մէջ, որովհետև գուցէ չկարողանանք տանել։ Իսկ եթէ ընկ-

նենք, չթողնէ մեր տկար ոյժի յուսով, այլ տայ իւր ողորմութեան շնորհը, որ կարողանանք տանել առանց մեղք գործելու և յաղթուելու։ Սրա համար մեզ խրատում է առաքեալը։ Ա. Կորնթ. Ժ. 13։—»Ուրիշ փորձութիւն ձեր վրայ չի եկել, բայց միայն մարդկանցից, Աստուած հաւատարիմ է և ձեզ չի ձգել այնպիսի փորձութեան մէջ, որ ձեր կարողութիւնից բարձր լինի. փորձութեան հետ ազատելու միջոցներն էլ կըտայ, որ կարողանաք համբերել»։ Ահա այսպէս փորձութեան մէջ մեր յոյսը Աստծու վրայ դնելով՝ աւելացնում ենք—«Այլ փրկեա զմեզ ի չարէ»—Այսինքն փրկիր մեզ այն չար հոգուց, որ փորձելով տանում է մեզ դէպի մեղքը և խնդրում ենք Աստծուց, որ ազատէ մեզ մեղքի իշխանութիւնից։ Ուրեմն զգալով մեր տկարութիւնն և թերութիւնը, որ փորձւում ենք մեզ շրջապատող թշնամիներից, մենք չենք կարող անմեղ մնալ, եթէ Աստուած չ՝օգնէ։ Ուրեմն միշտ պիտի հետևինք աստուածային օրէնքին, որով միայն կարող ենք ամեն-փորձանքներից ազատուիլ։

ՎԵՐՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ.—«Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս ամէն»։—Որովհետև քոնն է արքայութիւնը և զօրութիւնը և փառքը յաւիտեանս ամէն։ Սա մեզ սովորեցնում

է, որ մենք այս աղօթքը կարդանք հեզութիւնով և հաւատով և սրա համար էլ մարդ ուղղում է իւր աղօթքը Աստծուն, Որից սպասում է փրկութիւն։ Նա է տիեզերքի թագաւորը և միայն Նա ունի յաւիտենական իշխանութիւն և փառք։ Տէրունական աղօթքը վերջանում է ամէն խօսքով, որ նշանակում է թող կատարուի մեր խնդրուածքը։ Ահա այսպէս կըտայ Աստուած իւր շնորհքը միայն այն ժամանակ, երբ կաղօթենք հաւատով, յուսով և սիրով և մեր կեանքը համաձայն պիտի լինի մեր խնդրքին։

ԻՆՆ ԵՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Քրիստոնէական հաւատի հիմքը Փրկչի աստուածութիւնն է. Յիսուս իւր ուսումն աւանդեց երբ երկրիս վրայ էր և ապա իւր համբարձումից յետոյ Նրա աշակերտները տարածեցին։ Առաքեալները քրիստոնէութիւնը տարածեցին խօսքով և գրով։ Նոր Կտակարանը երկու մաս է—Աւետարան և Գործք առաքելոց. Նոր կտակարանը սովորեցնում է մեզ ճանաչել Քրիստոսին իբրև ճշմարիտ Աստուած և հաւատալ Նրա վարդապետութեանը։ Հին Կտակարանը մարգուն հրամայելով է սովորեցընում, իսկ Նորը հեզութեան և խոնարհութեան օրինակ լինելով, պատուիրում է սիրով և յօժար կամքով ընդունել Նրա վարդապետութիւնը և երանի է տալիս իւր ուսման հետեւողներին և կատարողներին խոստանում է յաւիտենական երջանկութիւն։

ա. «Երանի՛ աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից»։—Երանի հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի արքայութիւնը։ Հոգով աղքատ ասելով պիտի հասկանանք նրանց, որոնք մեղք չունին, որոնց սրտի բաւականութիւնը Աստուած է, որոնց Երկնաւոր Վարդապետը երկնքի արքայութեան ժառանգութիւն է խոստանում։ Զգէտք է հպարտանալ մեր ունեցած գիտութիւնով, հարստութիւնով, յաջողութիւնով, որովհետև այդպիսիների սիրտն աշխարհային անցաւոր վայելչութիւններից բաժանուած է։

բ. «Երանի՛ սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին»։—Երանի՛ սգաւորներին, որովհետև նրանք պիտի մխիթարուին։ Սգաւոր նրանք են, որոնք ճանաչելով իրենց պակասութիւնները՝ զգում են յանցանքի պատիժը, խոստովանում են իրենց մեղքերը և սգաւորի նման արտասուում են և զղջում, խնդրում են Աստծուց, որ նրանց սուգը քաւութեան արժանացնի և այս տխրութիւնը յաւիտենական ուրախութեան փոխարինէ։

գ. «Երանի՛ հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր»։—Երանի հեզահոգիներին, որովհետև նրանք պիտի ժառանգեն երկիրը։ Հեզութիւնն մի այնպիսի մեծ առաքինութիւն է, որին արժանի են տէր լինելու միայն Աւետարանի հարազատ գաւակները. հեզութիւնով միայն կարելի է ամեն արգելքների յաղթել և երկիրը ժառանգել խաղաղ սրտով։

դ. «Երանի՛ որ քաղցեալ և ծարաւի իցեն վասն արդարութեան, զի նոքա յագեսցին»։—Երանի նրանց, որ սոված ու ծարաւ են արդարութեան համար, որովհետև նրանք պիտի կշտանան։ Յաւիտենական երջանկութիւն ցանկացողները արդարութեան համար քաղցած և ծարաւ պիտի լինին հարկաւոր ժամանակ։ Եւ ո՞վ է, եթէ ոչ նրանք, որոնք միշտ առաքինի կեանք են վարում, բայց իրենց դարձեալ արդար չեն համարում Աստծու առաջ և փափագում են հոգեւոր սննդով կշտանալ այն կեանքում։

ե. «Երանի՛ ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն»։—Երանի ողորմածներին, որովհետև նրանք ողորմութիւն պիտի գտնեն։ Երանութեան փափագողները պիտի լինին ողորմած, որ փոխադարձ ողորմութեան արժանանան։ Եթէ ուսումնական է՝ իւր շրջանում բարոյականութիւն քարոզէ, տկարներին մխիթարէ։ Եթէ հարուստ է՝

նեղացածներին կարեկցէ, քաղցածներին կըշտացնէ, տնանկներին օգնէ, անյիշաչար և ողորմած լինի դէպի իւր թշնամիները։ Ողորմութեան և բարութեան աղբիւրը Յիսուսն է. ուրեմն միայն գթասիրտը կարող է ողորմութիւն գտնել երկնքի արքայութեան մէջ։

զ. «Երանի՛ այնոցիկ, որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն»։—Երանի նրանց, որ սրտով մաքուր են, որովհետև նրանք պիտի Աստծուն տեսնեն։ Ով որ կամենում է Աստծու սուրբը տեսութեանն արժանանալ, նրանից պահանջւում է որ ունենայ սուրբ սիրտ. իսկ դրա համար հարկաւոր է արդար, ճշմարիտ, անկեղծ և սուրբ լինել, որ արժանանայ Փրկչի գերբնական վարձատրութեան, այն է Աստծուն տեսնել և ապրել երջանկութեան մէջ։

է. «Երանի՛ խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին»—Երանի խաղաղաղութիւն սերմանողներին, որովհետև նրանք պիտի Աստծու որդիներ կոչուին։ Խաղաղարար բառն արդէն ցոյց է տալիս թէ այդ շնորհքն ունեցողները ինչպիսի բնաւորութիւն պիտի ունենան։ Իւրաքանչիւր քրիստոնեայ պիտի լինի խաղաղասէր, անվնաս, բարոյական, չբամբասող և երկու հակառակորդներին սիրով հաշտեցընող, որ արժանանայ կոչուելու Աստծու որ-

դի։ Յիսուս ինքն օրինակ է, որ երկնքից իջաւ և Իւր մահով հաշտեցրեց մեղաւորներին Հօր Աստծու հետ։

Ը. «Երանի՛ որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից»։—Երանի արդարութեան համար հալածուողներին, որովհետև նրանցն է երկնքի արքայութիւնը։ Այս անցաւոր աշխարհում ամեն տեսակ չարչարանքներ ու զրկանքներ պիտի տանենք համբերութիւնով, առանց արտնջալու. մեր լաւութեան փոխարէն շար կըհատուցանեն, ճշմարիտ խօսելու համար կըպատժեն, բարեգործութեան համար կ'անուանարկեն, բայց երբ մենք այդ ամենը համբերութիւնով կըտանենք, Աստուած մեզ համար տեղ կըպատրաստէ արքայութեան մէջ։

Թ. «Երանի՛ է ձեզ, յորժամ նախատիցեն զձեզ և հալածեսցեն և ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ վասն իմ. ցնծացէք և ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս»։—Երանի՛ ձեզ, երբ կընախատեն և կըշարշարեն ձեզ և իմ պատճառով շատ չար բաներ սուտ տեղ կասեն ձեր մասին։ Ցնծացէք և ուրախ կացէք, որովհետև ձեր վարձը շատ է երկնքում։ Մատթ. Ե. 3։ Երանութեան փափագողները յոժարութիւնով պիտի ընդունին ամեն տեսակ նեղութիւններ և մինչև անգամ մահ, Յիսուսի անուան համար։ Այսպիսի չարչարանքների համար Աստծու վարձատրութիւնը չափ ու սահման չի որոշում, այսպիսի վարձատրութիւնը անգնահատելի է։ Եւ սրա համար Յիսուս յուսադրում է, ուրախ կացէք, որովհետև ձեր վարձը շատ է երկնքում։

ՀԱՒԱՏ

Իւրաքանչիւր քրիստոնեայ պարտաւոր է իմանալ հաւատի ճշմարտութիւնները և նրա վերաբերեալ ուսումը, որի վրայ հիմնուած է հաւատը. առանց ուսումնասիրելու չկայ հաւատ։ Հաւատալ նշանակում է սրտով ընդունել աստուածային այն ճշմարտութիւնները, որ Աստուած սուրբ գրքի միջոցով յայտնել է իւր ընտրած մարգարէների և առաքեալների բերանով։ Հաւատն երբեմն կըհանդիպի դժուարութիւնների և փորձանքների, սակայն քրիստոնեան հաստատ յուսով կըդիմադրէ չարամիտ մարդկանց սխալ դատողութիւններին, ինչպէս զգուշացնում է սուրբ գիրքը—«Արմատ ձգած և նրանում շինուած, ինչպէս որ սովորեցիք և առաջացաք գոհութիւնով»։ Կող. Բ. 7։ Քրիստոնեայի հաւատը կենդանի պէտք է լինի. երբ միտքն ընդունում է հաւատի վեհութիւնը, սիրտն ևս

գործում է նրա հետ և դիմադրում են հաւատի դէմ հակառակորդներին։ Սակայն մեր մտքով և որտով միայն չենք կարող հաստատ մնալ հաւատի ճշմարտութիւնների մէջ, եթէ միայն սուրբ հոգին չօգնէ, որովհետև մարդս միշտ դէպի չարն է հակամիտ, ուրեմն Հոգին սուրբ պիտի ներգործէ մարդու վրայ և նրա մէջ ծնունի Հաւատ, Յոյս և Սէր և այս առաքինութիւնները պիտի միշտ ոյժ լինեն ամեն տեսակ փորձանքների մէջ։ Աստծու յայտնութիւնները փոքր ի շատէ դժուար հասկանալի են ամենքին և այդ պատճառով քրիստոնէութեան սկզբներում ս. Գրքի դէմ ելան զանազան հակառակ մտքեր և մոլորութիւններ, որոնց պատճառով մի քանի տիեզերական ժողովներ եղան։

Քրիստոնէութեան առաջին դարերում, նոր հաւատացեալներից շատերը մոլորւում էին և քրիստոնէական վարդապետութեան ճշմարտութիւնները ամեն մարդ միակերպ չէր հասկանում ս. Աւետարանի մեկնութիւնը, ուստի առաջ եկան սխալ կարծիքներ և մոլորութիւններ Աւետարանի վարդապետութեան մասին. սրա համար ս. հայրապետներն որոշեցին տիեզերական ժողով կազմել և հերքել մոլորուած հոգևորականների թիւր ազանդները։ Առաջին տիեզերական ժողովը գումարուեցաւ 325 թուին Բիւ-

զանդիայի Նիկիա քաղաքում, մեծն Կոստանդիանոսի Կայսրութեան օրերում, 318 հայրապետների մասնակցութիւնով։ Ժողովի նպատակն էր հերքել Արիոս երէցի մոլորութիւնը, որը թէև Յիսուսին Փրկիչ էր ընդունում, բայց չէր դաւանում Նրան Աստծու որդի և հաւասար Հօր և ս. Հոգուն, այլ քարոզում էր թէ Յիսուս փոքր և օտար արարած է. ուստի ս. հայրապետները Նիկիոյ ժողովում քննելով այս մոլորութիւնը, հերքեցին այն և կազմեցին «Հաւատոյ հանգանակը», որ է Հաւատամքը, որն հիմնուած է ս. Գրքի հիման վրայ։ Իսկ Արիոսի մոլորութիւնը նզովեցին և իւր հետևողներին աքսորեցին։ Հայոց եկեղեցու կողմից այդ ժողովին մասնակցեց Արիստակէս հայրապետը։

Նիկիոյ ժողովում հաստատուած հաւատոյ հանգանակը, մինչև այսօր հայոց եկեղեցին պահպանում է։ Հանգանակ նշանակում է հաւատի մասերի գլխաւոր ճշմարտութիւնների ժողովածու։

Հանգանակ.

«Հաւատամք ի մի Աստուած ի Հայրն ամենակալ, յարարիչն երկնի և երկրի երևելեաց և անտեսանելեաց։

Եւ ի մի տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին, այսինքն յէութենէ հօր։ Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աս-

տուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ և ոչ արարած։ Նոյն ինքն ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղև յերկինս և ի վերայ երկրի երևելիք և աներևոյթք։ Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ ի յերկնից, մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարեալ ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն սրբով. որով էառ մարմին, հոգի, և միտ և զամենայն որ ինչ է ի մարդ ճշմարտապէս և ոչ կարծեօք։

Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ յաւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս նովին մարմնովն նստաւ ընդաջմէ հօր։ Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեան ոչ գոյ վախճան։

Հաւատամք և ի սուրբ Հոգին յանեղն և ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և ի մարգարէս և յաւետարանս, որ էջն ի Յորդանան, քարոզեաց զառաքեալն և բնակեցաւ ի սուրբսն։

Հաւատամք և ի միմիայն ընդհանրական և առաքելական եկեղեցի ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց, ի յարութիւնն մեռելոց, ի դատաստան յաւիտենից, հոգւոց և մարմնոց յարքայութիւն երկնից և ի կեանս յաւիտենականս։

«Հաւատում ենք մէկ Աստուած ամենակալ Հօրը, երկնքի և երկրի երևելի և աներևոյթ արարածների ստեղծողին։

Մի Տէր Աստծու որդի Յիսուս Քրիստոսին, որ ծնուած է Աստծուց, այսինքն Հօր էութիւնից. Աստուածը Աստծուց, լոյսը լուսից, ճշմարիտ Աստուածը ճշմարիտ Աստծուց, ծնունդ է և ոչ թէ ստեղծած։ Նոյն ինքը Հօր բնութիւնից է, նրանով ամեն բան եղաւ երկնքի և երկրի վրայ երևելի և աներևոյթ։ Որը մեր մարդկանցս և մեզ փրկելու համար իջաւ երկնքից, մարմին առաւ, մարդացաւ, կատարեալ ծնաւ սուրբ կոյս Մարիամից սուրբ Հոգով։ Որից առաւ մարմին, հոգի, միտք և այն ամենը, ինչ որ մարդու մէջ կայ ճշմարտապէս և ոչ թէ կարծիքով։

Չարչարուեցաւ, խաչուեցաւ, թաղուեցաւ, երրորդ օրն յարութիւն առաւ, վերացաւ երկինք և նոյն մարմնով նստեց Հօր աջակողմը։ Գալու է նոյն մարմնով և Հօր փառքովը դատելու կենդանիներին և մեռելներին, որի թագաւորութիւնը վերջ չունի։

Հաւատում ենք ս. Հոգուն, անեղն ու կատարեալը, որը խօսեց օրէնքների, մարգարէների և Աւետարանի մէջ, որն իջաւ Յորդանան, քարոզեց ուղարկուածին և բնակուեց սրբերի մէջ։

Հաւատում ենք մի ընդհանրական և առաքելական ս. եկեղեցի. մի մկրտութիւն, ապաշխարութիւն, քաւութեան և մեղքերի թողութեան. մեռելների յարութեանը, յաւիտենական

դատաստանին հոգիների և թէ մարմինների, երկընքի արքայութեան և յաւիտենական կեանքին։

ԳՈՅՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Հանգանակը բաժանւում է չորս գլխաւոր մասի. ա.—Հաւատալ Հայր Աստուած, բ.—Որդին Աստուած, գ.—Հոգին ս. Աստուած և դ.—Հաւատալ Քրիստոսի եկեղեցին իւր սուրբ խորհրդով։ «Հաւատամք ի մի Աստուած ի Հայրն ամենակալ, յարարիչն երկնի և երկրի երևելեաց և աներևոյթից»—այս ասելով խոստովանում ենք, որ կայ մի Աստուած, մերժելով միանգամայն բազմաստուածութիւնը։ Աստծու գոյութեան հետ պիտի իմանալ Նրա բնութիւնը՝ թէ իւր համար ինչ է յայտնած և թէ մարդու համար ինչ է արած։ Բայց մենք մեզնից չենք կարող կատարելապէս ճանաչել Աստծուն Նրա համար, որ Նրա բնութիւնը մեծ մասամբ խորհրդաւոր է մեզ համար. միայն այնքան կրճանաչենք, որքան մեզ սուրբ գիրքը յայտնած է։ «Ամեն բան արուեցաւ ինձ իմ Հօրից և ոչ ոք չգիտէ թէ ով է Որդին, բացի միայն Հօրից և թէ ով է Հայրն՝ բացի միայն Որդուց և ում Որդին կը կամենայ յայտնել։ Ղուկաս. Ժ. 22։ Աստուածային բնութեան մասին ս. Գիրքը երկու բան

է սովորեցնում. առաջին, որ չկայ ուրիշ Աստուած բացի Նրանից.—«Աստուած մէկ է և ամենիս Հայը, որ ամենիս վրայ է և ամենիս հետ և մեր մէջ»։ Եփես. Դ. 6։

Երկրորդ՝ աստուածային բնութիւնը հաւասար է Հօր, Որդու և ս. Հոգու մէջ և այս երեք անձինք ունին մի աստուածութիւն. «Մկրտեցէք նրանց Հօր, Որդու և ս. Հոգու անունով»։ Մատթ. ԻԸ. 19։ Այս սուրբ Երրորդութիւնը քրիստոնէական հաւատի հիմքն է այս երեք անձինք մի ներգործութիւն ունին փրկութեան համար. բայց հանգանակի մէջ Հայր ասելով պէտք է իմանալ, որ Երրորդութեան մի անձն է Հայր Աստուած, հանգանակի մէջ Ամենակալ ասելով իմանում ենք, որ Աստուած ունի կատարելագործութիւնները դէպի Ինքն և դէպի մարդը։ Դէպի ինքն ունեցածն են—Անմահ, Յաւիտենական, Հոգևոր, Ամենագէտ, Անփոփոխ, Ամենուրեք, Ամենակարող և այլն։ Իսկ դէպի մարդս են—Բարի, Իմաստուն, Արդար և այլն։ Անմահ-յաւիտենական ասելով հասկանում ենք, որ Աստուած չունի ոչ սկիզբն և ոչ վերջ։ Հոգևոր ասելով հաւատում ենք, որ Աստուած չունի ոչ մի նիւթական մասն, այլ Նա Հոգի է. «Աստուած հոգի է և Նրա երկրպագողները հոգով և ճշմարտութիւնով պիտի

երկրպագութիւն տան»։ Յովհ. Դ. 24։ *Ամենազէտ* ասելով իմանում ենք, որ անցեալը, ներկան և ապագան յայտնի է Աստծուն, որովհետև Նա է բոլորի ստեղծողը և ամեն ինչ ներկայ է Նրա համար։ *Անփոփոխ* ասելով իմանում ենք, որ Աստուած հեռու է որևէ փոփոխութիւնից և որովհետև Նա յաւիտենական է, ուրեմն պէտք է որ լինի անփոփոխ և բարութեան ազբիւր և ոչինչ չի պակասի։ «Բոլոր բարի տուրքերն ու պարգևները վերևից են իջել, լոյսի Հօրից և Նրա մէջ փոփոխումն կամ շուռ տուող շուաք չկայ»։ Յակ. Ա. 17։ *Ամենուրեք* ասելով հաւատում ենք, որ չկայ մի տեղ, ուր Աստուած չկարողանայ ներգործել իւր զօրութեամբ, ուստի և այս կատարելութեան մէջ ևս պարունակւում է Աստծու *Ամենագիտութիւնը։ Ամենակարող* ասելով խոստովանում ենք, որ չկայ ոչինչ որ կարողանայ Աստծուն արգելք լինիլ, որովհետև ինչ որ կամենայ՝ կարող է անել և արարածն այնքան միայն զօրութիւն ունի, որչափ Աստծուց տրուած է. և այս հաստատուած է իւր արարչագործութիւնով։ «Յիսուս նայեց նրանց և ասաց. այդ բանը մարդկանց համար անկարելի է, իսկ Աստծու համար ամեն բան կարելի է»։ Մատթ. ԺԹ. 26։ *Բարի* ասելով իմանում ենք Աստծու հաստատ կամքը, որ պատրաստ է ամեն ժամանակ

բարութիւն անել իւր արարածներին։ Նա Իւր բարութիւնով ներգործում է մեզ վրայ զանազան կերպով՝ մեր հոգու կարողութեան համեմատ և ոչինչ բան չի կարող արգելք լինել Նրա բարութեան։ *Իմաստուն* ասելով խոստովանում ենք, որ Աստուած ունի ամեն իմաստութիւն, որի նպատակը միշտ բարի է։ «Աստուած իմաստութիւնով երկրի հիմքը ձգեց և երկինքը խորհրդով պատրաստեց»։ Առաք. Գ. 19։ *Արդար* ասելով ճանաչում ենք սուրբ կամքը. Նա վարձատրում է արդարներին և պատժում մեղաւորներին։ Եւ որովհետև Իւր արդարութիւնը սփռում է մեղաւորների վրայ որպէս զի նրանց մօտեցնէ Իրեն, այդ պատճառով կոչւում է *Ողորմած-Գթած։ Ոչինչ* բան չի կարող այնչափ մխիթարել մեր հոգին, որքան Նրա կատարելութիւնների վրայ մտածելով մխիթարւում ենք։ «Ուրեմն դուք կատարեալ եղէք, ինչպէս որ ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է»։ Մատթ. Ե. 48։

«Արարիչն երկնի և երկրի երևելեաց և աներեւոյթից» ասելով Աստուած ցոյց տուեց իւր ստեղծագործութիւնով, որն որ բոլոր շնչաւոր և անշունչ, երևող և չերևող առարկաները Նա է ստեղծել։ «Նա ասաց և եղան, հրամայեց և հաստատուեցան»։ Սաղմոս ԼԲ. 9։ Սուրբ Գիրքը մանրամասն պատմում է որ Աստուած վեց օրում

ստեղծեց բովանդակ աշխարհը, բայց բոլոր արարածների մէջ ամենից երևելին հրեշտակներն են և մարդը։ Հրեշտակները անմարմին հոգիներ են, որոնք սպասաւորում են Աստծուն։ Հրեշտակ նշանակում է ուղարկուած. հրեշտակներն երկու տեսակ են—բարի և չար։ Բարի հրեշտակները նրանք են, որոնք մնացին իրենց սրբութեան և հնազանդութեան մէջ. դրանք բազմաթիւ են։ «Ցեսայ և շատ հրեշտակների ձայները լսեցի, որոնք աթոռի և չորս կենդանիների շուրջն էին կանգնած. նրանց թիւը անհամար էր»։ Յայտ. Ե. 11։ Հրեշտակները սիրով հնազանդում են Աստծուն և դրա համար Քրիստոս մեզ օրինակ է բերում ասելով. «Քո կամքը լինի ինչպէս երկնքումն, այնպէս էլ երկրիս վրայ»։ Իսկ չար հրեշտակները նրանք են, որոնք հպարտութիւնով ընդդէմ կացան Աստծուն և Նրանից հեռանալով ընկան անդունդը։ Քրիստոսից առաջ այս չար հոգիները մի զօրութիւն ունէին, որով ազդում էին մարդկանց դանազան հիւանդութիւններով։ Այս հիւանդութիւններին Քրիստոս հրաշքներով վերջ տուեց։ Նրանից յետոյ մենք այլևս պատճառ չունինք վախենալու սատանայի իշխանութիւնից, այլ միայն պիտի զգոյշ լինինք փորձութիւնից։ «Արթուն կացէք և զգուշացէք, որովհետև թշնամի սատանան առիւծի պէս գոռում է

և որոնում է թէ ում կլանէ»։ Ա Պետ. Ե. 8։ Աստուած մարդուն հոգի և մարմին տուեց, բայց հոգին գլխաւոր մասն է մարմնի. թէպէտ մէկը միւսից զանազան են, բայց միացած են և այս միաւորութիւնով մարդս մտածում է, դատում է, ունի զգացողութիւն և կեանք։ Մարդու արժանաւորութիւնը և մաքուր կեանքը հոգու մէջն է։ Հոգին միշտ պիտի իշխէ մարմնուն. ուստի մարդս բանական հոգի է, որն իւր վրայ մարմին ունի պատած, որը ինչպէս գործիք պիտի ծառայէ հոգուն աշխարհում ապրելու համար և իւր նմանութեան ստեղծեց. այն է իւր ստեղծածին բանականութիւն տուեց դատելու, սրբութեան մէջ ապրելու և բարութիւն գործելու։

ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԻՒՆ

Նախախնամութիւնը Աստծու արարչագործութեան հետևանքն է, որն որ միշտ հոգում է իւր արարածների համար և խնամում է նաև միջամտում է մեր կեանքի մէջ։ Աստծու խնամքը բաժանւում է երկուսի—հասարակ և յատուկ։ Հասարակ խնամքն երևում է աշխարհին տուած օրէնքների մէջ, օրինակ արեգակի լուսաւորութեան, չորս տարերքի, ժամանակի

և եղանակի փոփոխութիւնների մէջ ընդհանրապէս։ «Որ նա իւր արեգակը ծագեցնում է չար և բարի մարդկանց վրայ և անձրև է ուղարկում թէ արդարների և թէ մեղաւորների վրայ»։ Մատթ. Ե. 13։ Աստծու յատուկ խնամքն իմանում ենք պատմութիւնից, այն է Մովսէս մարգարէին, Յովսէփ գեղեցիկին, արդար Յովբին, թէ որչափ պահպանում էր անյայտ կերպով, Իւր զօրութիւնով։

ՀԱՆԴԱՆԱԿԻ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԸ

«Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յորդին Աստուծոյ ծնեալն յԱստուծոյ»։ Հանդանակի մէջ Տէր ասելով ոչ թէ միայն պիտի հասկանանք որպէս Արարիչ և Նախախնամող, այլ պիտի ճանաչենք Նրան նաև մեր Փրկիչ։ Յիսուս անունը դրուած է Հայր Աստուծուց, ինչպէս Գաբրիէլ հրեշտակն աւետեց. «Որդի կը ծնիս ու անունը Յիսուս կը դնես, նրա համար, որ իւր ժողովրդին պիտի ազատէ մեղքից»։ Մատթ. ա. 21։ Քրիստոս բառը յունարէն է, Մեսիա Եբրայեցերէն և նշանակում են օծեալ. իսրայելացիք այս անունը տալիս էին թագաւորներին, մարգարէներին և քահանաներին։ Եւ Յիսուս ճշմարիտ օծեալ էր. Նա այս երեք պաշտօնն էլ կատարեց մեր փրկութեան համար։

Թէպէտ չստացաւ նիւթական օծումը, բայց ստացաւ հոգևոր օծումը։ «Նազարէթցի Յիսուսը, որին Աստուած սուրբ հոգով և զօրութիւնով օծեց, որ մանեկաւ բարութիւն անելու սատանայից բռնուածներին բոլորին բժշկեց, որովհետև Աստուած Նրա հետն էր»։ Գործ. Ժ. 35։ Քրիստոս կատարեց մարգարէի պաշտօնը, սովորեցնում էր ժողովրդին, հասկացնում էր Աստծու կամքը և փրկութեան ճանապարհը. յայտնում էր, որ ինքն ուղարկուած էր Հօրից և հաստատեց այդ հրաշքներով։ Քրիստոսը ճշմարիտ քահանայ էր. հին քահանայապետը պատարագում էր սեղանի վրայ թողութեան համար և բարեխօսում էր ժողովրդի համար. նաև տարին մի անգամ, քաւութեան օրը մտնում էր խորանը և այնտեղ զոհ էր մատուցանում և արիւնը մշտկաւ սրսկում էր քաւութեան սեղանի վերայ և ժողովրդի համար բարեխօսում էր, որ Աստուած ընդունէ զոհը և թողութիւն լինի մեղքերին։ Իսկ Քրիստոս Իւր անձը զոհեց մեր մեղքերի համար։ Ուրեմն Քրիստոսի զոհը մեծ է հին քահանաների զոհից, որը պատարագ եղաւ մեզ համար։ Քրիստոս մեր թագաւորն է։ «Նա մեծ կըլինի և բարձրեալի որդի կըկոչուի և Տէրը կըտայ Նրան Դաւթի աթոռը և Յակովբի տան վրայ յաւիտեան կըթագաւորէ»։ Ղուկաս Ա. 32։ Յիսուսի թագաւորութիւնը

երկնային է և հոգևոր և հոգեպէս թագաւորում է Իւր եկեղեցու վրայ և մեզ կօգնէ մեր կարօտութեան ժամանակ։

Նա Իւր սիրելիներին կըպահպանէ մինչև Իւր գալուստը։ «Յորդին Աստուծոյ» ասելով խոստովանում ենք, որ Նա ևս նոյն բնութիւնն ունի, ինչ որ Հայր Աստուածը։ Ուրեմն Նա հաւասար է Հօր և ս. Հոգուն։ «Ինչպէս որ Հայրն ունի Իւր մէջ կեանք, նոյնպէս և Որդուն տուեց, որ կեանք ունենայ Իւր մէջ»։ Յովհ. Ե. 29։ «Լոյս ի լուսոյ». լոյսը ծագում է ճրագից, թէպէտ ճառագայթն հեռանում է աղբիւրից, բայց նրանից չի բաժանւում, այնպէս էլ Որդին ծնաւ Հօրից, եկաւ աշխարհ և անբաժան էր նրա բնութիւնից։ «Սկզբումն էր բանը և բանը Աստծու մօտ էր և բանն Աստուած էր»։ Յովհ. Ա. 1։ «Մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն Սրբով»։ Միածին Որդին, ճշմարիտ Աստուածը և յաւիտենական բանը ճշմարիտ մարդկային բնութիւն առաւ Հոգուց և մարմնից բաղկացած. ծնունդով սուրբ Կոյսից սուրբ Հոգու զօրութիւնով անուանուեցաւ *Որդի մարդոյ*։ «Ահա կոյսը կըղանայ և կըծնի որդի և կ'կոչեն նրան Էմմանուէլ, որ նշանակում է Աստուած մեզ հետ»։ Եսայի Ե. 14։ Քրիստոսի մարդեղութեան խորհուրդը անհասանելի է մեզ ինչպէս մեր հոգու և մարմնի միութիւնը։ Քրիստոսի աստուածային և մարդկային բնութիւնը մենք խոստովանում ենք մի բնութիւն անշփոթ և անբաժանելի։

Սորա համար երրորդ տիեզերական ժողովը գումարուեցաւ Եփեսոս քաղաքում 431 թուին, 200 եկեղեցական հայրերի մասնակցութեամբ։ Ժողովը դատապարտեց Նեստորի մոլորութիւնը, որ քարոզում էր Քրիստոսի մէջ երկու բնութիւն և երկու որոշ անձնաւորութիւն, ս. Կոյսից ծնուածն այլ անձն, իսկ Աստծուց ծնուածը այլ և ս. Կոյս Մարիամին դաւանում էր ոչ թէ Աստուածածին, այլ մարդածին։ Սոյն ժողովը հաստատեց դաւանել սուրբ Կոյս Մարիամին Աստուածածին։ Այս ժողովին մասնակցեցին սուրբ Սահակի աշակերտները։ Սորա համար «Հաշտարեալ, խաչեալ, թաղեալ» ասելով հաւատում ենք, որ Յիսուս նպատակ ունէր իւր մարդանալով՝ ազատել մեզ մեղքից իւր չարչարանքով և մահով։ Նրա խաչելութիւնը մեզ յիշեցընում է թէ ինչպիսի անարդ և անպատիւ մեռաւ։ Խաչի պատիժը անէծք և նախատինք էր համարւում հրէից մէջ. Քրիստոս իբրև անէծքի և մեղքի վերացնող յանձն առաւ այդ անիծուած պատիժը, որպէս զի խաչով վերացնի մեղքը և մեզ հաշտեցնի Հօր Աստծու հետ։

«Աստուած ոչ անի, որ ես ուրիշ բանով պարծենամ, բացի մեր տէր Յիսուսի խաչով, որով աշխարհն ինձ համար խաչուած է ես էլ աշխարհի համար»։ Գաղ. Զ. 14։ «Թաղեալ» ասելով սովորում ենք, որ Քրիստոս իւր թաղումով սպանեց Ադամային մահը։ «Երրորդ աւուր յարուցեալ». սրանով ցոյց տուեց, որ Իւր յարութիւնով հաստատեց մարդկանց վերջին յարութիւն մեռելոց և յաւիտենական կեանքի յոյսը։ «Համբարձաւ յերկինս». Յիսուս Աստուածային տնօրէնութիւնը կատարելուց յետոյ, Իւր յարութեան քառասներորդ օրը Զիթենեաց սարից իւր աշակերտներին օրհնելուց յետոյ նոյն մարմնով երկինք բարձրացաւ և նըստաւ Հօր աջ կողմը. Նա պէտք է բռնէր Իւր տեղը, որը ժամանակաւոր թողել էր մեր փրկութեան համար. Հօր աջ կողմը նստեց իբրև վարձատրութիւն Իւր կատարեալ հնազանդութեան և անսահման սիրոյ, որ մեզ ցոյց տուեց Իւր չարչարանքով և մահով։ «Գալոց է նովին մարմնով» հասկացւում է, որ կրկին պիտի գայ մեծ փառքով մարդկանց դատելու աշխարհի վերջը, երբ Նրա թագաւորութիւնը կըտիրէ։

ՀԱՆԴԱՆԱԿԻ ԵՐՐՈՐԴ ՄԱՍԸ

«Հաւատամք և ի սուրբ Հոգին, յանեղն և ի կատարեալն, որեւ օսեցաւ Հայրն»։ Ս. Գիրքը պատ-

մում է, որ աշխարհի ստեղծագործութեան ժամանակ ս. Հոգին շրջում էր ջրի երեսին։ Ուրեմն ս. Հոգին երրորդութեան մի անձն է, Հօր և Որդու հաւասար և ճշմարիտ Աստուած։

Սորա դէմ եղան մոլորութիւններ և սորա համար երկրորդ ժողովը կայացաւ Թէոդոս մեծ կայսրի օրով Կոստանդնուպոլսում 381 թուին, ուր ժողովուեցան 150 հայրապետներ։ Գումարման պատճառն էր Մակեդոն եպիսկոպոսի մոլորութիւնը, որը ուրանում էր ս. Հոգու աստուածութիւնը։ Ժողովը հերքեց այդ մոլորութիւնը և սահմանեց դաւանել ս. Հոգուն համապատիւ և հաւասար Հօր և Որդուն։ Ժողովուած ս. հայրերը իրենց յաղթանակը կնքեցին «Փառք ի բարձունս» փառաբանական երգով։ Այդ ժողովին հայոց կողմից մասնակցեց Մեծն Ներսէս հայրապետը։

Ս. Հոգու շնորհը բաժանւում է երկուսի՝ *հրաշալի* և *հասարակ*։ Աստուած հրաշալի շնորհքը տուեց մարգարէներին և առաքեալներին, իսկ *հասարակ* շնորհքները՝ արդար մարդկանց։ Մարգարէներն ու առաքեալները հրաշալի շնորհով կատարելապէս հասկացան ս. Գրքի իմաստը և սուրբ Հոգու շնորհիւ խօսեցին ու գրեցին և զանազան լեզուներով ցոյց տուին, որ իրենց շնորհքն երկնքից է

և իրենց ուսումն Աստուածանից է։ Քրիստոնէութեան նոր տարածման ժամանակ նրանք հրաշքներ էին գործում, բայց երբ եկեղեցիները հաստատուեցան, այլ ևս հարկ չկար այս հրաշալի գործողութեան։ Հասարակ չնորհքն է ս. Գրքի մտքերը հասկանալ, բարութիւն գործել, հեզ կեանք վարել, ճշմարտութիւն քարոզել և այլն։ Երրորդութեան գոյութիւնն աւելի հաստատուեցաւ, երբ ս. Հոգին աղաւնու նմանութեամբ իջաւ Յորդանան Յիսուսի վրայ նրա մկրտութեան ժամանակ, Հայրն էլ երկնքից վկայեց թէ դա է իմ սիրելի որդին, որին ես հաւանեցայ։

ՀԱՆԳԱՆԱԿԻ ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍԸ

«Հաւատամք և ի միմիայն ընդհանրական, առաքելական սուրբ եկեղեցի»։ Այն մարդիկ, որոնք հաւատում էին առաքեալների քարոզութեան և ընդունում էին ս. Աւետարանը, հիմնեցին միաբանութիւններ, որ յունաց լեզուով կոչւում էր էկկլեզիա (եկեղեցի կամ հաւատացեալների ժողով)։ Թէ նոր հաւատացեալների ժողովը և թէ հին ուխտի ճշմարիտ աստուածպաշտները նոյն հաւատով, սիրով և յուսով իրար հետ միացան և կազմեցին քրիստոնէական եկեղեցի, որ ունի

չորս նշան — *մի, սուրբ, ընդհանրական և առաքելական։ Միութիւն* ասելով հասկանում ենք, որ նոր հաւատացեալներն են մի հօտ և պիտի ճանաչեն միայն իրրև գլուխ բոլորի մի Տէր Յիսուս Քրիստոսին։ Հաւատացեալները թէև ազգով ու լեզուով զանազանւում են միմեանցից, սակայն միացած են մի հաւատով, սիրով ու յուսով, որոնց հիմքն է Քրիստոս։ «Դուք ամենքդ, որ Քրիստոսի անունով մկրտուեցաք Քրիստոսին հագած ունիք, խտրութիւն չկայ ոչ հրեայի, ոչ հեթանոսի, ոչ ծառայի, ոչ մեծաւորի, ոչ արուի և ոչ էգի մէջ, որովհետև դուք ամենքդ մէկ էք Յիսուս Քրիստոսի համար»։ *Սրբութիւն* ասելով իմանում ենք, որ եկեղեցին որոշւում է աշխարհից, եկեղեցու անդամները մկրտութիւնով նուիրւում են Աստծու ծառայութեան և ուխտում են միշտ սրբութեան մէջ մնալ և գտնում են նրա մէջ ամեն մխիթարութիւն, ինչ որ հարկաւոր է մեզ։ Նաև նրա ուսումը սրբութիւն է քարոզում *ընդհանրական, կաթուղիկէ* կամ *տիեզերական* եկեղեցի նշանակում է թէ նա չի սահմանափակւում մի ազգով, ինչպէս հին ուխտի եկեղեցին, այլ հաւաքումն է ամեն ազգերի Ադամից սկսած մինչ աշխարհի վերջը կը շարունակուի։ *Առաքելական* է կոչւում հայ եկեղեցին, որովհետև եկեղեցու առաջին հիմ-

նադիրն է Քրիստոս. Նրանից յետոյ առաքեալների ջանքով հիմնուեցան եկեղեցիք և նրանց քարոզութիւնով ս. Աւետարանը տարածուեցաւ։ Քրիստոնէական եկեղեցիներն ունին զանազան անուններ, ազգերի համեմատ. օրինակ—Հռովմայեցոց, Յունաց, Հայոց և այլն։ Հայոց եկեղեցին հիմնուեցաւ ս. Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալների ձեռով և ս. Գրիգոր Լուսաւորչով։ Եկեղեցին ունի եօթն խորհուրդներ։

ա. Մկրտութիւն

Մկրտութիւնը եկեղեցու ս. խորհուրդների առաջինն է, որով ընդունւում ենք իբրև անդամ եկեղեցու մէջ, մաքրուելով սկզբնական մեղքից։ Մկրտութիւն բառը նշանակում է լուանալ։ Այս խորհուրդը հայոց եկեղեցին կատարում է անփոփոխ՝ ընկղմելով երեխային երեք անգամ ջրի մէջ ասելով՝ «Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ»։ Հրեաները սովորութիւն ունէին մկրտուիլ, որպէս քաւութեան և հեթանոսական ազգից մաքրուելու նշան։ Թէպէտ Յովհաննէս մկրտում էր ջրով, բայց նրա մկրտութիւնը դեռ խորհուրդ չէր և այդ պատճառով էլ չունէր փրկարար զօրութիւն։ Քրիստոս Ինքն մկրտուելով, աշակերտներին աւանդեց ասելով.

«Գնացէք այսուհետև ուսուցէք և մկրտեցէք բոլոր հեթանոսներին Հօր, Որդու և ս. Հոգու անունով»։ Մատթ. ԽԸ. 19։ Ս. Մկրտութիւնը կատարւում է Երրորդութեան անունով և զօրութիւնով և մեր մէջ նորոգւում է Աստծու պատկերը և նմանութիւնը աւազանի վերստին ծննդեամբ։ Մկրտողն երեք անգամ ընկղմում է երեխային ջրի մէջ թաղելով հին մարդը, որ ծնուի նոր մարդ։ Մի անգամ մկրտելով քրիստոնեան ստանում է Քրիստոսի շնորհը, ուստի մկրտութիւնն անկրկնելի է։ «Մի է Տէրը, մի է հաւատը և մի մկրտութիւնը»։ Եփես. Դ. 5։

բ. Դրոշմը եկեղեցու երկրորդ խորհուրդն է, որով մկրտուողը ստանում է զգալի շնորհ օծումով և զօրութիւն, որով պատրաստւում է, պատերազմելու աշխարհի մոլութիւնների դէմ։ Սրանով մկրտուողը զօրացնում է իւր սիրտը, միտքը և կամքը։ Այս խորհուրդը կատարուեցաւ Քրիստոսի վրայ Նրա մկրտութեան ժամանակ. «Եւ երբ մկրտուեցաւ Յիսուս, շուտով ջրից դուրս եկաւ և ահա բացուեցաւ երկինքը և տեսաւ Աստծու հոգին, որ աղաւնու նման իջնում էր և գալիս Նրա վրայ»։ Մատթ. Դ. 16։ Դրոշմի խորհուրդը հաստատուեցաւ նաև ս. Հոգու գալով առաքեալների վրայ վերնատանը. Նրանից յետոյ առաքեալները ձեռք դնելով մկրտուողների վրայ,

ս. Հոգու զօրութիւնն զգալի կերպով իջնում էր նրանց վրայ։ Հայոց եկեղեցին ևս այս խորհուրդը կատարում է մկրտութիւնից յետոյ անմիջապէս. մկրտողը ս. մեռոնով օծում է ընծայեալի ճակատը, աչքերը, ականջները, բերանը, սիրտը և այլն. դրոշմ ընդունողը դառնում է կենդանի վկայ և ճշմարիտ երկրպագող Քրիստոսի։

գ. *Ապաշխարութիւնը* եկեղեցու ս. խորհուրդ է, որով մեղաւորը զղջացած իւր մեղքերը խոստովանում է քահանայի առաջ՝ մեղայ ասելով և ստանում է Քրիստոսի չարչարանաց արդիւնքով մեղքերի թողութիւն։ Ապաշխարողը ջերմեռանդութիւնով և ճշմարիտ զղջումով պիտի խոստովանի իւր մեղքերը, նաև ներէ իւր պարտապանին, որովհետև առանց հաշտուելու և ներելու ինքն էլ թողութիւն չի գտնիլ Աստծուց։ Մեղաւորը թողութիւն է գտնում միայն այն ժամանակ, երբ քահանայի տուած ապաշխարանքը անվերի կատարում է։ «Փչեց դէպի նրանց և ասաց—առէք սուրբ Հոգին, եթէ որ մէկի մեղքը թողնէք, թողուած լինի նրանց, թէ որ մէկին կապէք՝ կապուած մնայ»։ Յով. Ի. 22։

դ. *Հաղորդութիւնը* եկեղեցու չորրորդ խորհուրդն է, որը սահմանուած է Քրիստոսից. ճաշակում ենք հաց ու գինին, իբրև Քրիստոսի

մարմինն ու արիւնը՝ մեղքի թողութիւն և յաւիտենական կեանք ժառանգելու համար։ «Առէք, կերէք, այս է իմ մարմինը»։ «Դրանից ամենքդ խմեցէք, որովհետև այդ է իմ նոր ուխտի արիւնը, որ շատերի համար թափւում է մեղքի թողութեան համար»։ Հաղորդութեան խորհրդի նիւթերն են բաղարջ հաց և անապակ գինի, որովհետև Քրիստոս ընթրեաց գիշերը բաղարջ հաց օրհնեց և գինի։ Աստուածպաշտութեան այս խորհրդի կատարիչը կոչւում է պատարագ։ Սրանով մենք միանում ենք Քրիստոսի հետ։ Հայոց եկեղեցու կանոնների համաձայն, տարուայ հինգ նաւակատիքներին պիտի ճաշակուինք զղջումով, ջերմեռանդ հաւատով, մաքուր սրտով, որ ընդունելի լինի, ինչպէս առաքեալն ասում է. «Թող ամեն մարդ իւր անձը փորձէ, ապա ճաշակէ և ըմպէ»։ Ա. Կորնթ. 28։

ե. *Ամուսնութիւնը* հինգերորդ խորհուրդն է, որ է *պսակը* և որը հաստատեց Աստուած դրախտում։ «Օրհնեց աստուած նրանց և ասաց. աճեցէք և լցրէք երկիրը և տիրեցէք դրան», Ծննդ. Ա. 28։ Քանի որ մարդս հնազանդութիւնով պահում էր այս խորհուրդը երջանիկ էին, բայց երբ պատուիրանազանցութիւնով հեռացաւ ս. նպատակից, պսակը փոխուեց լոկ դաշնակցութեան, որից առաջացաւ բազմակնութիւնը։ Սա-

կայն քրիստոնէութիւնը ամուսնութեանը տուեց մեծ նշանակութիւն, ինչպէս առաջ էր. «Որն որ Աստուած միաւորեց, մարդ չպիտի բաժանէ»: Մատթ. ԺԹ. 4: Ուրեմն Աստուած է, որ կապում և միաւորում է պսակուողներին մինչև մահը. պսակուողները միմեանց հետ պիտի կապուին բարոյական սիրով, յաժար կամքով, ըստ որում Քրիստոս նմանեցնում է Իրեն, ինչպէս որ միացած է եկեղեցու հետ: «Այս խորհուրդը մեծ է. բայց ես Քրիստոսի և եկեղեցու վրայ եմ ասում»: Եփես. Ե. 25:

զ. *Կարգ կամ ձեռնադրութիւնը* եկեղեցու վեցերորդ խորհուրդն է. արժանաւոր անձը ժողովրդի հաւանութեամբ եպիսկոպոսից ձեռնադրուելով ստանում է հոգևոր իշխանութիւն հոգևոր պաշտօն վարելու և ս. խորհուրդները նուիրագործելու: Այս խորհուրդը Քրիստոս Զիթենեաց սարի վրայ հաստատեց. «Յիսուս բարձրացրեց իւր ձեռքը և օրհնեց նրանց»: Ղուկ. ԻԴ. 51: Այս խորհուրդն ընդունողները պարտաւոր են նաև քարոզել սուրբ Աւետարանը ոչ միայն խօսքով, այլ և գործով: Կարգն ունի եօթն աստիճան—1. դռնապանութիւն, 2. դպրութիւն, 3. երգմնեցուցչութիւն, 4. ջահընկալութիւն, 5. կիսասարկաւագութիւն, 6. սարկաւագութիւն և 7. քահանայութիւն: Քա-

հանայապետութիւնն ու եպիսկոպոսապետութիւնը զանազանւում են իրենց պաշտօնի իշխանական գերազանցութիւնով: Քահանայի ձեռն ու ճակատը օծւում է սուրբ միւռոնով. նոյնպէս և եպիսկոպոսինը, իսկ կաթուղիկոսի գագաթը, որով ընդհանուր ազգի ծայրագոյն իշխանութիւն է ստանում, և համարւում է ս. Թադէոսի ս. Բարդուղիմէոսի և ս. Գրիգոր Լուսաւորչի յաջորդ:

է. *Օծումն հիւանդաց.* այս խորհուրդը մեր եկեղեցին հիւանդների վրայ այսպէս է կատարում: Քահանան վերցնում է ս. Խաչ, Աւետարան և ս. Մասն և գնում է հիւանդի մօտ ու կարդում «Գիշեր ժամու» Մաշտոցի մէջ գրուածը և ապա ճաշակում է. այս արարողութիւնը հիւանդին զօրացնում է յուսով, թեթևանում է ցաւը և մեղքերի թողութիւն է ստանում: Յիսուս այցելութեան գնաց հարիւրապետի և Պետրոսի զօրանչի մօտ և բժշկեց նրանց: Նոյնն էլ Իւր աշակերտներին պատուիրեց. «Հիւանդներին բժշկեցէք, բորոտներին սրբեցէք»: Մատթ. Ժ. 8:

«Ի յարութիւն մեռելոց»: Այս բառերը նշանակում են, թէ պիտի հաւատանք, որ երբ մեր հոգին հեռանայ և մարմինը հող դառնայ, մի օր կրկին պիտի կենդանանայ հոգին և նոր մարմին պիտի ստանայ: Սա երկու խորհուրդ

ունի—հոգու անմահութիւն և մարմնի յարութիւն։ Հին Կտակարանն ևս հաստատում է, որ այժմ կենդանի են մարմնով Ենովք և Եղիան, որ մեզ համար յայտնի օրինակ են. Քրիստոս էլ խաչի վրայ ասաց աւազակին, այսօր ինձ հետ կըլինիս դրախտում։

«Ի դատաստան յաւիտենից, հոգւոց և մարմնոց յարքայութիւն երկնից և ի կեանս յաւիտենականս»։ Ստուած աշխարհի նախախնամողն է, մի օր պիտի հատուցանէ իւրաքանչիւրիս վարձ և պատիժ։ Նոյնպէս իմաց է անում մեզ մեր խըղճմտանքը, որ կայ մի Ամենակարող, որը պիտի դատի՝ արդարներին մշտական հանգիստ տալով, իսկ մեղաւորներին անվերջ տանջանք։

Այդ օրը մեզ անյայտ է, սակայն պիտի ամենայն ժամ պատրաստ լինինք, որ չլինի թէ յիմար կոյսերին նմանինք, որոնք փեսայի գալըստեան ժամին, դուրսը մնացին։ «Զգոյշ կացէք, որովհետև չգիտէք ոչ օրը և ոչ ժամը»։ Մատթ. Ե. 13։ Եւ դարձեալ աւելացնում է թէ մեղաւորները կերթան յաւիտենական տանջանք, իսկ արդարները յաւիտենական հանգիստ։

ՀՀ Ազգային գրադարան
NL0163168